ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի

Հեղինակ ՝ Տիգրանյան Հ. Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Աշխատանքային իրավունք

Բակալավրի կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասիչ մասնագիտութուն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՈՏԱՑԻԱՆ

Աշխատանքի իրավունքը մարդու սահմանադրական իրավունքներից է: ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք»:

Աշխատանքային իրավունքը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի ճյուղերից է: Այն դասավանդվում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կրթություն տրամադրող բոլոր բուհերում և ուսումնական հաստատություններում, որպես հիմնական մասնագիտական դասընթաց:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային նոր օրենսգիրքն (հետայսու՝ Օրենսգիրք) ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին: Օրենսգիրքն իր կառուցվածքով և բովանդակությամբ զգալիորեն տարբերվում է ՀՍՍՀ 1972 թվականից գործող նախկին օրենսգրքից այն պարզ պատճառով, որ ժամանակի ընթացքում փոխվել են հասարակական հարաբերությունները և դրանց բնույթը: «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքը սահմանել է անցումային նորմեր, համաձայն որոնց Օրենսգրքի դրույթները տարածվում են նախկինում ծագած աշխատանքային հաբերությունների վրա՝ դրանով իսկ ապահովելով այդ հարաբերությունների անընդհատությունն ու շարունակականությունը:

Օրենսգրքի և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրական ակտերի վերաբերյալ ներկայումս շատ չեն գիտական հետազոտությունները, մեկնաբանություններն ու ուսումնասիրությունները, ինչը գործնական դժվարություններ է առաջացնում իրավակիրառողի համար՝ նորմի տարընթերցումից խուսափելու առումով: Սակայն այս ոլորտում աստիճանաբար ձևավորվում են դատական նախադեպեր, որոնք հնարավորություն են տալիս պրակտիկ իրավաբաններին միասնական տեսակետ ձևավորել աշխատանքային օրենսդրության առավել վիճահարույց խնդիրների վերաբերյալ:

Աշխատանքին իրավունքների պաշտպանության տեսակետից կարևոր է հստակ սահմանել Գործատուի և Աշխատողի իրավունքների ու պարտականությունների շրջանակը ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին համապատասխան:

Աշխատանքային մի շարք իրավահարաբերություններ օրենսդրական կարգավորումից բացի կարգավորվում են նաև ենթաօրենսդրական ակտերով: Այս ոլորտում ՀՀ կառավարության կողմից ընդունվել և գործում են երեք տասնյակից ավելի որոշումներ, իսկ Օրենսգրքի առանձին դրույթների տարընթերցումից խուսափելու և կիրառության միօրինակություն ապահովելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններով Օրենսգրքի տարբեր հոդվածների վերաբերյալ հաստատվել են պաշտոնական պարզաբանումներ:

Դասընթացի ծրագիրը կազմված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 2024թ. մայիսի 5-ի դրությամբ առկա խմբագրության հիման վրա:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն դասընթացը նպատակ է հետապնդում ապագա իրավաբանների մոտ ձևավորել որոշակի հմտություններ աշխատանքի իրավունքի պաշտպանության իրավական գործիքների կիրառության առումով: Բացի այդ, ուսումնասիրման նպատակն է ուշադրություն հրավիրել աշխատանքային հարաբերություններից բխող վերաճերի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերհանմանն ու գնահատմանը: Ընդ որում, աշխատանքային իրավունքի պաշտպանությունը պետք է ուղղված լինի ոչ միայն աշխատողի, այլ նաև գործատուի խախտված իրավունքների պաշտպանությունը:

Ապագա իրավաբանները ձեռք կբերեն աշխատանքային իրավունքի վերաբերյալ տեսական գիտելիքներ և դրանք կհամադրեն գործնական խնդրիների հետ: Դասընթացը հնարավորություն է տալիս ապագա իրավաբանին իրավական ակտի շրջանակում գնահատելու Գործատու–Աշխատող հարաբերություններում աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանումը, աշխատանքային վեճի առկայությունը կամ բացակայությունը, առկայության դեպքում այն լուծելու հնարավոր իրավական տարբերակները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

- *Ուսանողներին ներկայացվում է աշխատանքային հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ իրավական պայմանները, պայմանագրի հասկացությունը, տեսակները, համատեղությամբ աշխատանքի առանձնահատկությունները, անօրինական աշխատանքը, ինչպես նաև այն հետևանքները, որոնք վրա են հասնում անօրինակ աշխատանքի դեպքում: Թեմայի շրջանակում խոսվում է նաև աշխատողների իրավունքների և պարտականությունների մասին՝ տալով տեսական հիմնարար գիտելիքներ:*
- *Մասնակիցներին ներկայացվում են կոնկրետ իրավիճակային խնդիրներ՝*

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Դասընթացի շրջանակումն ուսումնասիրվում են աշխատանքային իրավահարաբերության ծագման և դադարման առանձնահատկությունները, գործատու և աշխատող սահմանումները, ինչպես նաև պետական հսկողությունը աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Դասընթացի թեմաների շուրջ ակտիվ դասախոսությամբ ապահովել հետաքրքրվածություն առարկայի նկատմանն և մատուցել նախնական տեսական գիտելիքներ կարգավորման առարկայի վերաբերյալ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ և ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Աշխատանքային իրավունքի, դրա սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության և էության, այդ ինստիտուտների և նորմերի օրենսդրական ամրագրման և կիրառման գործընթացի վերաբերյալ հիմնարար և համակարգված գիտելիք: Ի մասնավորի.
   Աշխատանքային պայմանագիրը և տեսակները,
   Որոնք են պայմանագիր չունենալու հետևանքները
   Ով է գործատուն և աշխատողը
   Աշխատաժամանակը և կառուցվածքը,
   Աշխատանքի վարձատրությունը,
   Հանգստի իրավունքը և ինչպես է տրամադրվում
   Կարգապահական տույժը և խարախուսումը
   Աշխատանքային վեճը և լուծման մեխանիզմները

Հմտությունները՝

- ***գիտելիքի կիրառման հմտությունները՝***

1. Կարող է որոշել կիրառելի իրավական նորմը և այն կիրառել փաստերի նկատմամբ
2. Կարող է մեկնաբանել նորմը:
3. Կարող է վերհանել իրավական խնդիրը:

- ***ընդհանրական իմացական հմտությունները՝***

1. Կարող է կիրառել մասնագիտական գիտելիքներն առավել հաճախ հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:
2. Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը***

1. Ունակ է վերհանել և գնահատել աշխատանքային վեճի լուծման համար կարևոր փաստական հանգամանքները:
2. Ունակ է կիրառել աշխատանքային վեճի լուծման համար կարևոր իրավական հիմքերը:
3. Գործատու և աշխատող հարաբերությունների հավասարակշռում:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Առարկան դասավանդվում է ինտերակտիվ դասախոսության մեթեդով, սահիկաշարի ցուցադրությամբ, գործնական խնդիրների և թեստերի լուծման միջոցով:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՂՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ **2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ**, որից **34 ակադեմիական ժամ** նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել **3 ուսումնական տարվա 2 կիսամյակում**:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**52**
1.1.1. Դասախոսություններ	**18**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**34**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**20**
1.2.1.Քննություններին նախապատրաստում	
1.2.2.Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**20**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**12**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**8**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք գնահատակա նով**

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԻ ԲԱՇԽՈՒՄ (ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԺԱՄԵՐՈՎ) ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	2=3+4	3	4

Թեմա 1. Աշխատանքային հարաբերություններ հասկացությունը, կողմները և ծագման հիմքերը	6	2	4
Թեմա 2. Աշխատանքային պայմանագրի կատարումը և դադարումը	6	2	4
Թեմա 3. Աշխատաժամանակի կազմակերպումը	6	2	4
Թեմա 4. Հանգստի իրավունք	6	**2**	**4**
Թեմա 5. Աշխատավարձ, աշխատողի երաշխիքների և հատուցումների համակարգը	7	**3**	**4**
Թեմա 6. Աշխատանքային կարգապահություն	7	**3**	**4**
Թեմա 7. Աշխատողների անվտանգությունը և առողջությունը	7	**2**	**5**
Թեմա 8. Աշխատանքային վեճեր և աշխատանքային իրավունքի պաշտպանություն	7	**2**	**5**
Ընդամենը	**52**	**18**	**34**

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱ 1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿՈՂՄՆԵՐԸ ԵՎ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ենթաթեմա 1. Աշխատանքային հարաբերություններ

1.1 Աշխատանքային հարաբերությունների հասկացությունը և սկզբունքները

1.2 Աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը

1.3 Աշխատանքային իրավասուբյեկտություն

1.4 Աշխատանքային հարաբերությունների կողմերը՝ Գործատու, Աշխատող:

Ենթաթեմա 2 . Աշխատանքային հարաբերությունների ծագումը

2.1 Աշխատանքի ընդունման անհատական իրավական ակտ

2.2 Աշխատանքային պայմանագրի հասկացությունը

2.3 Աշխատանքային պայմանագրի կնքման կարգը

2.4 Փորձաշրջանը աշխատանքի ընդունվելիս

Ենթաթեմա 3. Աշխատանքային պայմանագրի տեսակները

3.1 Աշխատանքային պայմանագրի տեսակները ըստ գործողության ժամկետի՝ որոշակի ժամկետով և անորոշ.
3.2 Աշխատանքային պայմանագիր տնաշխատների հետ
3.3 Համատեղությամբ աշխատանքային պայմանագիր
3.4 Սեզոնային աշխատանքի պայմանագիր
3.5 Ժամանակավոր աշխատանքային պայմանագիր
3.6 Անօրինական աշխատանք
3.7 Պատասխանատվությունը աշխատանքային հարաբերությունների ոչ պատշաճ ձևակերպման համար

ԹԵՄԱ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄ Ը

Ենթաթեմա 1. Աշխատանքային պայմանագրի կատարումը

1.1 Աշխատանքային հարաբերության կողմերի իրավունքների իրացումը և պարտականությունների կատարումը
1.2 Աշխատանքային պայմանագրով չնախատեսված աշխատանքի կատարումը
1.3 Աշխատանքի էական պայմանները փոփոխելը
1.4 Աշխատանքային պայմանների ժամանակավոր փոփոխում
1.5 Այլ աշխատանքի փոխադրումը պարապուրդի դեպքում
1.6 Աշխատանքի չթույլատրելը
1.7 Հեռավար աշխատանք

Ենթաթեմա 2. Աշխատանքային հարաբերությունների դադարումը

2.1 Աշխատանքային պայմանագրի լուծան հիմքերը
2.2 Աշխատանքային պայմանագրի լուծումը կողմերի համաձայնությամբ
2.3 Աշխատանքային պայմանագրի լուծումը պայմանագրի գործողության ժամկետը լրանալու հիմքով
2.4 Աշխատանքային պայմանագրի լուծումը աշխատողի նախաձեռնությամբ
2.5 Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ
2.6 Գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելու արգելքը
2.7 Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը
2.8 Զանգվածային ազատումներ
2.9 Աշխատողների ներկայացուցիչների երաշխիքները
2.10 Աշխատանքային հարաբերությունների կարգավորումը զինվորական ծառայության անցնելու հետ կապված
2.11 Արձակման նպաստ
2.12 Վերջնահաշվարկ

ԹԵՄԱ 3. ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ենթաթեմա 1. Աշխատաժամանակի հասկացությունը և կառուցվածքը

1.1 Աշխատաժամանակի նորմալ տևողությունը
1.2 Կրճատ աշխատաժամանակ
1.3 Ոչ լրիվ աշխատաժամանակ
1.4 Աշխատաժամանակի ռեժիմի սահմանելը
1.5 Աշխատաժամանակի գումարային հաշվարկ
1.6 Արտաժամյա աշխատանքի ներգրավվման հիմքերը և կարգը
1.7 Արտաժամյա աշխատանքի սահմանափակումները
1.8 Արտաժամյա և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերի նախօրեին աշխատանքի տևողությունը
1.9 Գիշերային աշխատանք
1.10 Հերթապահություն

ԹԵՄԱ 4 . ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ենթաթեմա 1. Հանգստի ժամանակի հասկացությունը

1.1 Հանգստի ժամանակի տեսակները՝ ընդմիջում հանգստի և սնելու համար, ամենշաբաթյա հանգիստ, ամենամյա հանգիստ
1.2 Լրացուցիչ և հատուկ ընդմիջումներ
1.3 Ամենամյա նվազագույն արձակուրդ
1.4 Ամենամյա երկարացված արձակուրդ
1.5 Ամենամյա լրացուցիչ արձակուրդ
1.6 Ամենամյա արձակուրդի տրամադրման կարգը
1.7 Ամենամյա արձակուրդից հետ կանչում, արձակուրդի տեղափոխում և երկարաձգում
1.8 Ամենամյա արձակուրդի վճարում
1.9 Հատուցում չօգտագործած արձակուրդի համար

Ենթաթեմա 2. Նպատակային արձակուրդներ

2.2 Նպատակային արձակուրդի տեսակները
2.3 Հղիության և ծննդաբերության արձակուրդ
2.4 Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ
2.5 Ուսումնական արձակուրդ
2.6 Պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար տրամադրվող արձակուրդ
2.7 Չվճարվող արձակուրդ:

ԹԵՄԱ 5. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ԱՇԽԱՏՈՂԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ենթաթեմա 1. Աշխատավարձ

1.1 Աշխատավարձի հասկացությունը, նվազագույն աշխատավարձ
1.2 Աշխատանքի վարձատրության կազմակեպումը
1.3 Աշխատանքի վարձատրությունը աշխատանքի նորմալ պայմաններից շեղում ունեցող աշխատանքի դեպքում
1.4 Վարձատրությունը արտաժամյա և գիշերային աշխատանքի համար
1.5 Վարձատրությունը հանգստյան և ոչ աշխտանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարած աշխատանքի համար
1.6 Վճարումը պարապուրդի ժամանակ
1.7 Ոչ լրիվ աշխատաժամանակի վարձատրություն
1.8 Վարձատրությունը աշխատանքի ծավալի ավելացման դեպքում
1.9 Վարձատրությունը խոտան արտադրանքի և աշխատանքի նորմաները չկատարելու դեպքում
1.10 Աշխատանքի վարձատրության նոր պայմանների մասին ծանուցումը
1.11 Աշխատավարձի վճարման ժամկետները և կարգը
1.12 Աշխատավարձի ժամկետանց վճարման հետևանքները և պատասխանատվությունը

Ենթաթեմա 2. Աշխատողների երաշխիքների և հատուցումների համակարգը

2.1 Ուսումնական արձակուրդի վարձատրությունը
2.2 Գործատուի կողմից մասնագիտական ուսուցումը
2.3 Առողջական վիճակի պատճառով աշխատողին այլ աշխատանքի փոխադրումը և հատուցումը
2.4 Լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը
2.5 Հատուցման կարգը՝ կատարվող աշխատանքի պայմաններից կամ բնույթից ելնելով
2.6 Աշխատանքը կատարելուց հիմնավորված հրաժարվելու դեպքում վճարման կարգը
2.7 Դոնորների երաշխիքները
2.8 Հատուցումը աշխատողի միջոցների օգտագործման դիմաց
2.9 Երաշխիքներ և հատուցումներ գործուղումների դիմաց
2.10 Աշխատավարձից պահումներ կատարելու հիմքերը և չափը

Ենթաթեմա 3. Անչափահասների և կանանց աշխատանքի իրավունքի պաշտպանությունը

3.3 Անչափահասների և կանանց աշխատանքի իրավունքի իրացման երաշխիքները և սահմանափակումները
3.4 Պատասխանատվությունը կանանց աշխատանքի իրավունքի խախտման համար

ԹԵՄԱ 6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ենթաթեմա 1. Աշխատանքային կարգապահության ապահովումը

1.1 Գործատուի ներքին իրավական ակտեր
1.2 Աշխատանքային կարգապահության հակացությունը և ներքին կարգապահական կանոնները
1.3 Խրախուսանքի միջոցները
1.4 Կարգապահական տույքի տեսակներ
1.5 Կարգապահական պատասխանատվության հիմքերը և կարգը

Ենթաթեմա 2. Նյութական պատասխանատվություն

2.1. Նյութական պատասխանատվության հասկացությունը և հիմքերը
2.2. Գործատուի նյութական պատասխանատվության հիմքերը
2.3 Վնասի հատուցումը կազմակերպության վերակազմակերպման կամ լուծարման դեպքում
2.4 Աշխատողի նյութական պատասխանատվության չափը
2.5 Լրիվ նյութական պատասխանատվության հիմքերը և կարգը
2.6 Լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիր
2.7

ԹԵՄԱ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Աշխատողների անվտանգութան և առողջության հասկացությունը
7.2 Աշխատանքի նորմալ պայմանների ապահովում
7.3 Անվտանգութան և առողջության հարցերով աշխատողների հրահանգավորում և ուսուցում
7.4 Դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին հայտնելը և ծառայողական քննության իրականացման կարգը:

ԹԵՄԱ 8 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Աշխատանքային վեճի հասկացությունը
8.2 Աշխատանքային վեճեր քննող մարմինները
8.3 Աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Ա) ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Գ. Վ. - Դասագիրք բուհերի համար, Երևան 2009
2. Ենգիբարյան Վ. - Աշխատանքային իրավունք, Երևան, 2010
3. Ուղեցույց – «Սեփականության և աշխատանքային իրավունքների պաշտպանություն», Երևան 2008

4. Տիգրանյան Հ.- Ձեռնարկ «ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների գործավարական փաստաթղթավորումը և գործնական կիրառության խնդիրները. Հարցեր և պատասխաններ», Երևան 2012
5. Ժ.Սարգսյան Ա. Հայրապետյան - Աշխատանքային օրենսգրքի մեկաբանություններ, Մաս 1, Մաս 2 2023թ.

Բ) ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն,
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,
3. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
4. «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենք (2004 թվականի նոյեմբերի 9)
5. ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք,
6. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000 թվականի մայիսի 17-ի թիվ ՀՕ-60), «Սնանկության մասին» ՀՀ օրենք (2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-51-Ն),

7 «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենք (2003 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՀՕ-66-Ն),
8 «Գործատուների միությունների մասին» ՀՀ օրենք (2007 թվականի փետրվարի 27-ի թիվ ՀՕ-115-Ն),
9 Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք (2000 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ՀՕ-135),
10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք (2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն),
11 Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր (կնքվել է 2020թ. Հոկտեմբերի 5-ին ՀՀ Կառավարության, ՀՀ Արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության միջև),
12 ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի «Ծանր, վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1599-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի հունիսի 16-ի թիվ 876-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1698-Ն որոշում,

13 ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 20-ի «Գործատուի ներքին եւ անհատական իրավական ակտերի հրապարակման, հաշվառման, պահպանման եւ արխիվացման կարգը հաստատելու մասին» թիվ 1882-Ն որոշում,

14 ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների (անկախ սեփականության ձեւից) աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության եւ առողջության այլ վնասման հետեւանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին» թիվ 579 որոշում,

15 ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի «Սեզոնային աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 1480-Ն որոշում,

16 ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Առանձին կատեգորիայի աշխատողների՝ օրական 24 ժամ աշխատաժամանակի տեւողությամբ պայմանավորված աշխատանքների ցանկը սահմանելու մասին» թիվ 1223-Ն որոշում,

17 ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի «Առողջապահական, հոգաբարձության (խնամակալության), մանկական դաստիարակչական, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման, կապի եւ աշխատանքի այլ առանձնահատուկ բնույթ ունեցող բնագավառների աշխատողների աշխատանքի եւ հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» թիվ 201-Ն որոշում,

18 ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» թիվ 1599-Ն որոշում,

19 ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տեւողությունը եւ տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1384-Ն որոշում,

20 ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների օրապահիկի եւ գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն եւ առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» թիվ 2335-Ն որոշում,

21 ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «Կազմակերպության աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության հարցերով հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1007-Ն որոշում,

22 ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի «Մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) հաշվառման եւ ծառայողական քննության կարգը, դժբախտ դեպքերի հաշվառման եւ ծառայողական քննության կարգը, մասնագիտական հիվանդությունների (թունավորումների) ցանկը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի ապրիլի 25-ի թիվ 121 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 458-Ն որոշում,

23 ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի շուկայի վերլուծության նպատակով միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 572-Ն որոշում,

24 ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնում ծառայության ընդհանուր ստաժի հաշվարկման կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 24-Ն որոշում,

25 ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման եւ դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշում,

26 ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 665-Ն որոշում,

27 ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) եւ պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության, եւ բժշկական զննության ծավալի ու հաճախականության ցանկը, անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշման ձեւերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշում,

28 ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի «Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների եւ ցուցանիշների NN 1 եւ 2 ցուցակները հաստատելու եւ ՀՀ կառավարության» 2005 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1987-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 12-Ն որոշում,

29 ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում եւ դրանց ենթակա կազմակերպություններում աշխատաժամանակի սկիզբը եւ ավարտը սահմանելու մասին» թիվ 2138-Ն որոշում: